

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» ----- 2022թ.

N ---- - Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՔ-ԷԱՃԱՇՁԲ-22/8-1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով և «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի հ.168-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին Հայաստանի Հանրապետության Կառավարության 04.05.2017 թվականի հ.526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 58-րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. ԵՔ-ԷԱՃԱՇՁԲ-22/8-1 ծածկագրով գնման ընթացակարգը համարել ամբողջությամբ չկայացած՝ գնման պահանջը դադարելու հիմքով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԵՔ-ԷԱՃԱՇՁԲ-22/8-1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Հաշվի առնելով այն, որ «Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենքի առաջին և ամենակարևոր նպատակը ՀՀ քաղաքացիների անկանխիկ վճարումներ կատարելու իրավունքի իրացումն է՝ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվել է, որ պետական կամ համայնքային բյուջեներից և այդ բյուջեներ կատարվող ցանկացած վճարում իրականացվում է անկանխիկ ձևով:

Երևան համայնքը ԵՔ-ԷԱՃԱՇՁԲ-22/8-1 ծածկագրով կազմակերպել է գնման ընթացակարգ, աղբահանության վճարների գանձման նպատակով անդորրագրերի ձեռքբերման համար: Գնման ընթացակարգում ճանաչվել է հաղթող, սակայն հաշվի առնելով վերոհիշյալ օրենքի ուժի մեջ մտնելը, չի կնքվել համապատասխան պայմանագիր: Ելնելով այն հանգամանքից, որ դադարել է գոյություն ունենալ գնման պահանջը, անհրաժեշտություն է առաջացել ամբողջությամբ չկայացած համարել գնման ընթացակարգը:

Միևնույն ժամանակ «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի հ.168-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության Կառավարության 04.05.2017 թվականի հ.526-Ն որոշմամբ սահմանված է, որ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա համայնքների կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգը կարող է ամբողջությամբ կամ մասնակի չկայացած հայտարարվել համայնքի ավագանու որոշման հիման վրա:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկման է ներկայացվում «ԵՔ-ԷԱՃԱՇՁԲ-22/8-1 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած համարելու վերաբերյալ» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ Հ. 1

«ԵՔ-ԷԱՃԱՇՁԲ-22/8-1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «ԵՔ-ԷԱՃԱՇՁԲ-22/8-1 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած համարելու վերաբերյալ» որոշման ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵՎԱՆՔ Հ. 2

«ԵՔ-ԷԱՃԱՇՁԲ-22/8-1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«ԵՔ-ԷԱՃԱՇՁԲ-22/8-1 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած համարելու վերաբերյալ» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ